ՀԵՍՈՒՐՍՆ ԵՒ ՀԵՍՈՒՐՍՆԱԿՑՍՆՆԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(08 նոյեմբերի, 2014 թ.)

Վեհափառ Տէր,

Հոգեւո՛ր հայրեր, մեծարգո՛յ բարերար, յարգարժա՛ն դասախօսներ եւ հիւրեր, ժառանգաւոր սաներ.

Խորհրդաւոր եւ խորհրդանշական օր է այսօր: Խորհրդաւոր, որովհետեւ, ասես հեռաւոր դարերի խորքից մեզ են այցելել հայ դպրութեան նահապետները՝ Ս. Սահակն ու Ս. Մաշտոցը, որ այսուհետ եւ ընդմիշտ իրենց ամենատես հայեացքի ներքոյ են պահելու հայ հոգեւոր եւ ազգային դպրութեան դարբնոցը՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանը: Իսկ խորհրդանշական է պահն այս, որովհետեւ իրար են միահիւսուել պատմական բերկրալի թուականներ, որ սոսկ թուանիշ չեն, այլ իւրաքանչիւրը մի բեկումնային պահ՝ հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու, հայագիտութեան եւ հայկական մշակոյթի զարգացման ընթացքում: Եւ բոլորովին պատահական չէ, որ գրերի գիւտից 1610 տարի անց՝ Ճեմարանի 140-ամեակին, նոյեմբեր ամսուայ այս արեւոտ օրը՝ այն նոյն վայրում, ուր Սահակն ու Մաշտոցը հիմնեցին առաջին դպրոցը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդութեամբ եւ ազգային բարերար Տիար Հրաչեայ Պօղոսեանի նուիրատուութեամբ կանգնեցնում ենք մեր դպրութեան հիմնադիր սրբերի յուշակոթողը: Թոյլ տուէք խորին շնորհակալութիւն յայտնել մեկենասին, որ առանձնակի վերաբերմունք ունի մեր կրթարանների՝ Գէորգեան ճեմարանի ու Վազգէնեան դպրանոցի նկատմամբ, եւ տարիներ շարունակ իր արժեւորելի նպաստն է բերում Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատութեանց զարգացմանն ու բարգաւաճմանը:

Կան թուականներ, որ ուղղակի դրոշմուած են իւրաքանչիւր հայի յիշողութեան մէջ՝ 301, 404, 451, 551, 1441, 1874... Դրանք վերաբերում են պատմական տարբեր իրողութիւնների, որոնք, սակայն, հետապնդել են միասնական նպատակ՝ պահել, պահպանել, ստեղծել, արարել ու բարձրացնել ամենայն ինչ, որ ազգային է, հայկական եւ յանուն հայկականութեան: Նոյնն է նաեւ օրուայ խորհուրդը՝ գրերի գիւտից յետոյ ստեղծուեց հայկական դպրութեան դարբնոցը, որ պիտի ժառանգէր հայրենաւանդ կրթութեան դարաւոր փորձը:

Վեհափա՛ռ Տէր, օգտուելով այս պատեհ առիթից՝ թոյլ տուէք Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատութիւնների անունից շնորհաւորել նաեւ Ձերդ Սրբութեան գահակալութեան 15-ամեակը, որ նշուեց օրեր առաջ:

Ուրախութեամբ ականատես ենք լինում աստուածահաճոյ Ձեր բարի գործերի իրականացմանը: Եւ երջանիկ ենք, որ 15 տարի շարունակ վայելում ենք Ձերդ Սրբութեան հայրական հոգածութիւնն ու խնամքը՝ որպէս սիրասուն զաւակներ բազմավաստակ եւ անձնուէր հօր: Ձեր յամառ ջանքերի շնորհիւ Ճեմարանը դարձաւ համալսարան, եւ եթէ փորձենք համառօտիւ ներկայացնել Ձերդ Սրբութեան 15-ամեայ գործունէութիւնը, դարձեալ կհանգենք կանխասացեալ համազգական նպատակին՝ պահել, պահպանել, ստեղծել, արարել ու բարձրացնել ամենայն ինչ, որ ազգային է, հայկական եւ յանուն հայկականութեան:

Մեր որդիական անկեղծ աղօթքն է առ Աստուած, որ Բարձրեալը բազմապատկի Ձերդ Սրբութեան կեանքի տարիները, աւելացնի Ձեր եռանդն ու կորովը Քրիստոսի՝ Ձեզ վստահուած հօտն առաջնորդելու փրկութեան դժուարին, բայց քաղցր ճանապարհին: